ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«25» մայիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-14/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի 08.05.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 08.05.2015թ. ներկայացրած բողոքով Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ուսումնասիրելով «ԲԷՑ-ԲԸԾՁԲ-15/05» ծածկագրով բաց ընթացակարգով (այսուհետ

նաև՝ Ընթացակարգ) «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը՝ գտնում է, որ այն կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Ընթացակարգի հրավերի մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, քանի որ Պատվիրատուի աշխատակիցների անձնակազմի առողջության ապահովագրությունը պետք է իրականացվի Ընթացակարգի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված 10 պահանջներին համապատասխան:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված 10 պահանջների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ նույն հավելվածով ուղղակիորեն մատնանշվել է աշխատակիցների առողջության ապահովագրության ծավալը և դրանով չի նախատեսվել որևէ բացառություն, սահմանափակում՝ նշված բժշկական ծառայություններից որևէ մեկի գծով:

Ընթացակարգով Ընկերությունը ներկայացրել է հայտով գնային առաջարկ՝ N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանված բժշկական ծառայությունների լրիվ և ամբողջական ծավալով մատուցման համար և որևէ բացառություն չի նախատեսել:

Գնահատելով վերոնշյալ փաստն՝ Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 04 արձանագրության 1.4 կետով որոշում է կայացվել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմքում դնելով նույն արձանագրության 1.2 կետով նշված հանգամանքը, այն է՝ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտի ոչ գնային առաջարկի (տեխնիկական բնութագրի) «Ընդհանուր բացառություններ» ցանկի 2.1 և 3.8 կետերում կան անհամապատասխանություններ, մասնավորապես, ընդհանուր բացառությունների ցանկի 2.1 կետով «մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերը և վիճակները» բացառությունը կիրառելու պարագայում բժշկական տեսակետից հնարավոր է դառնում մերժել պայմանագրի գործողության ընթացքում ի հայտ եկած ապահովագրական պատահարների մեծ մասը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող ապահովագրված անձանց միջին տարիքը բավական բարձր է և նրանք նախկինում երբևէ ապահովագրված չեն եղել, ինչից հետևում է, որ վերջիններիս առողջական վիճակը չի գտնվել բժիշկների պարբերական հսկողության ներքո և առկա են բազմաթիվ այսպես կոչված **«Նախապես առկա վիճակներ», որոնք համաձայն «Սիլ**

Ինշուրանս» ԱՓԲԸ-ի առաջարկի ենթակա չեն հատուցման, ինչն ուղղակի հակասում է Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջների իրականացման անհրաժեշտությանը և փաստացի նախատեսված ծառայությունների ամբողջական ծավալով մատուցումը դարձնում է անհնարին:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ ի տարբերություն «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի, Ընկերությունը գիտակցելով իր պատասխանատվությունն ապահովագրված անձանց նկատմամբ և հաշվի առնելով վերջիններիս մոտ առկա առողջական վիճակը, ներկայացրել է ավելի բարձր գնային առաջարկ՝ նպատակ ունենալով տրամադրել ապահովագրված անձանց իրական, այլ ոչ թե արհեստական սահմանափակումների կիրառմամբ իմիտացիոն ապահովագրական ծառայություններ, ինչպես նաև առաջնորդվել է ՀՀ կառավարության կողմից որդեգրված քաղաքականությամբ, որն արտահայտվել է սոցիալական փաթեթների տրամադրման մասին որոշմամբ, որտեղ ևս բացակայում է կասկածելի «մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերը և վիճակները» բացառությունը:

Տվյալ որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն, իսկ Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությամբ սահմանվել է ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր՝ հայտարարությունը հրապարակելու 5 օրացուցային օրվա ընթացքում, սակայն հայտարարության հրապարակման օրվանից՝ 11.04.2015թ.-ից մինչ օրս Ընկերության հետ պայմանագիր չի կնքվել: Այնուհետև, Պատվիրատուն 27.04.2015թ. ընդունել է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշում, որի համաձայն՝ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն ընտրվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից և որպես փոփոխության հիմնավորում՝ հիմք է ընդունվել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին 22.04.2015թ. ստացված ահազանգը:

Ընկերությունը նշել է, որ վերջինիս համար անհասկանալի է այն հանգամանքը, թե ինչպես Պատվիրատուն միայն թեժ գիծ (այն էլ անգործության ժամկետի ավարտից հետո) ներկայացված դիրքորոշման հիման վրա կարող էր փոխել իր որոշումը, այն պարագայում, երբ նախկին հաղթող ճանաչելու որոշմամբ հստակ սահմանվել է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-

ի կողմից ներկայացված գնման առաջարկի անհամապատասխանությունը հրավերի տեխնիկական բնութագրին:

Ընկերությունը փաստում է, որ Պատվիրատուի 30.04.2015թ. թիվ 13-01/653 գրության համաձայն 27.04.2015թ. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացվել է գրավոր պարզաբանում, որն էլ հենց Պատվիրատուն հիմք է ընդունել իր որոշման փոփոխության համար:

Այսպիսով, ըստ Ընկերության՝ Ընթացակարգով հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո որևէ մասնակից իրավունք չունի ներկայացնելու որևէ բանավոր դիրքորոշում կամ գրավոր պարզաբանում, այն էլ ուղղված հենց մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի փոփոխությանը և Պատվիրատուն իրավունք չունի հիմք ընդունել դրանք և փոխել գնման գործընթացում հաղթող ճանաչելու իր որոշումը:

Տվյալ պարագայում 27.04.2015թ. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված գրավոր պարզաբանման ընդունման և դրանով առաջնորդվելու Պատվիրատուի գործողության արդյունքում կոպտորեն խախտվել է Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը»: Ընկերությունը փաստում է նաև, որ խոսքը չի վերաբերում հայտում տեղ գտած այնպիսի տեխնիկական անհամապատաս-խանություններին՝ որոնք կբխեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 3-րդ մասում նշված պահանջից կամ որակավորմանը վերաբերող անհամապատասխանությանը, որի շտկման համար Օրենքով կարող է տրամադրվել եռօրյա ժամկետ, այլ այնպիսի անհամապատասխանության, որը հակասում է Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին և որի մատնանշմամբ Պատվիրատուն, ղեկավարվելով Օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով, գնահատել է ներկայացված հայտերը:

Պատվիրատուի կողմից կոպտորեն խախտվել են նաև Օրենքի 31-րդ հոդվածով սահմանված՝ հայտի գնահատմանը վերաբերող պահանջները, քանի որ համաձայն Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են

անբավարար և մերժվում են»: Անհասկանալի է, թե ինչպես է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչել և ներկայացված հայտը գնահատել բավարար, երբ 07.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 04 արձանագրության 1.4 կետով որոշել էր, որ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտը չի համապատասխանել հրավերի տեխնիկական բնութագրին:

Պատվիրատուի կողմից կոպտորեն խախտվել է նաև Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը, քանի որ Ընկերությանը մինչ օրս Պայմանագրի կնքման առաջարկ և պայմանագրի նախագիծ չի ներկայացվել, այն դեպքում, երբ տվյալ հոդվածով մատնանշված է Ընտրված մասնակից հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օր ժամկետ:

Ընկերությունը փաստում է նաև, որ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումն ընդունվել է անգործության ժամկետի ավարտից հետո թեժ գծով ներկայացված բողոքի հիման վրա, այն չի բխում Օրենքի 6-րդ բաժնով նախատեսված Գնումների գործընթացի բողոքարկման կարգի պահանջներից և ամբողջությամբ հակասում է Ընթացակարգի հրավերի 12-րդ կետում նշված կարգին, մասնավորապես, «Անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությունը հրապարակելու 5 օրացուցային օրվա ընթացքում»:

Ընկերությունը նշել է նաև, որ հայտարարությունը հրապարակվել է 11.04.2015թ., հետևաբար անգործության ժամկետն ավարտվում է 21.04.2015թ. ժամը 23:59-ին (տվյալ փաստը հրապարակված է եղել նաև www.gnumner.am կայքում), սակայն համաձայն Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության (փոփոխված)՝ թեժ գիծ բողոք է ներկայացվել 22.04.2015թ. անգործության ժամկետի ավարտից մեկ օր հետո: Ընկերությունը փաստում է, որ անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացված բողոքը, համաձայն Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի, ենթակա չէ ընդունման և որևէ կերպ չի կարող դրվել որոշման հիմքում և բավարար իրավական հիմք հանդիսանալ հայտարարության փոփոխության համար:

Այսպիսով, Ընկերությունը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը, 28-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերը, 33-րդ հոդվածի 3-րդ մասը և

ղեկավարվելով «Գնումների մասին ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ խնդրել է դադարեցնել Պատվիրատուի կողմից Ընթացակարգով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն, ուսումնասիրելով 20.05.2015թ. ԳԲԽ-14/15 բողոքի վերաբերյալ ստացված «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և արժևորելով բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը, 22.05.2015թ. Ն/SU-06/1-2371 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ

ա) կատարելապես անհասկանալի է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանման «ա» կետում առկա շեշտադրումը տեխնիկական բնութագրի միայն մեկ՝ քրոնիկ հիվանդությունների էական սրացումների վերաբերյալ ենթակետին, քանի որ վերջիններիս կողմից ներկայացված հայտում առկա «մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերը և վիճակները» բացառությունը հնարավոր է կիրառել տեխնիկական բնութագրով սահմանված ցանկացած կետի նկատմամբ և էականորեն սահմանափակել ծառայությունների տրամադրումը՝ ինչպես նշված է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից 11.04.2015թ. կայացված որոշման մեջ:

Այսինքն, տվյալ պարզաբանմամբ չի վերացել Պատվիրատուի կողմից նախկինում դիտարկված անհամապատասխանությունը, այլ ավելին, մասնակցի կողմից գլխավոր պարզաբանմամբ ընդունվել է, որ ինչպես նախկինում, այնպես էլ ներկա պարզաբանմամբ սահմանափակված է լիարժեքորեն ապահովագրական ծառայությունների տրամադրումը:

բ) Ընկերության կողմից ներկայացված պարզաբանման «բ» կետում ներկայացված շարադրանքը, չնայած օգտագործված նեղ մասնագիտական տերմինաբանությանը, ակնհայտորեն մատնանշում է այն փաստը, որ, իսկապես, վերջիններիս հայտը պարունակել է էական սահմանափակումներ սրտի ռիթմավար սարքերի տեղադրման հետ կապված և իրավացիորեն Պատվիրատուի կողմից 11.04.2015թ. կայացված որոշման մեջ նշվել է որպես տեխնիկական բնութագրին անհամապատասխան:

գ) «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումն առաջացնում է բազմաթիվ անպատասխան հարցեր, մասնավորապես, թե ինչով է պայմանավորված Ընթացակարգի մասնակից և հետևաբար շահագրգիռ կողմ

հանդիսացող «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ից ներկայացված պարզաբանումը որպես որոշման փոփոխության հիմք ընդունելը, երբ ակնհայտ է, որ չնայած տարատեսակ պարզաբանումներին, ներկայացված հայտերում առկա են էական տարբերություններ և միայն մեկ մասնակցից պարզաբանում ընդունելը կարող է դիտվել որպես ակնհայտ միտում դեպի այդ մասնակիցը, ինչը կոպտորեն խախտում է թե գործող օրենսդրության պահանջները և, թե ընդհանրապես գնումների թափանցիկ, բաց ընթացակարգ կազմակերպելու տրամաբանությունը: Ավելին, անհասկանալի է այն հանգամանքը, որ Պատվիրատուն մատնանշում է, որ գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 22.04.2015թ. նույն օրը ստացված ահազանգի հիման վրա և հանձնաժողովը որոշում կայացնելիս առաջնորդվել է հեռախոսազանգով տրված պարզաբանմամբ, այն պարագայում, երբ տվյալ նիստի օրը պարզաբանումը Պատվիրատուն չի տիրապետել, քանի որ պարզաբանման փաստաթղթի վրա առկա մտից կնիքը վկայում է այն մասին, որ այն Պատվիրատուի կողմից ստացվել է 27.04.2015թ.:

դ) Լիովին անընդունելի է Պատվիրատուի կողմից բարձրացված հարցադրումը, թե արդյոք «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն պատրաստվում էր հատուցել նախապես առկա հիվանդությունները՝ չունենալով նման բացառություն և էլ ավելի տարօրինակ է առանց որևէ հիմնավորում ներկայացնելու հնչեցված սուբյեկտիվ և միակողմանի պատասխանը, թե իբր նման դեպքերում Ընկերությունը ևս չէր հատուցելու:

Նմանատիպ հարցադրումն անհիմն կասկածի տակ է դնում «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից գրավոր կարգով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարելու պատրաստակամությունը, որը ոչ այլ ինչ է, քան Ընկերության բարի համբավի վարկաբեկման փորձ և ակնհայտ միտում դեպի բաց ընթացակարգի մյուս մասնակիցը:

Այսպիսով, Ընկերությունը նշել է, որ ոչ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը և ոչ էլ Պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը հիմք չեն Ընկերության կողմից բողոքով ներկայացված հերքման համար:

Ընկերության ներկայացուցիչները մասնակցելով Կենտրոնում 14.05.2015թ. ժամը 17:15-ին կազմակերպված հանձնաժողովի նիստին, ամբողջությամբ պնդել են «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և հայտնել, որ Ընկերությանը, որպես Ընթացակարգի ընտրված մասնակցի, Պատվիրատուն

սահմանված կարգով չի ծանուցել, պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ չի ուղարկել, այլ ընդհակառակն, անգործության ժամկետի ավարտից հետո անհասկանալի պատճառներով դադարեցրել է Ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը: Ուստի Ընկերության ներկայացուցիչները կրկին խնդրել են դադարեցնել Պատվիրատուի կողմից Ընթացակարգով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

2. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.05.2015թ. N 13-01/717 գրությամբ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից աշխատակիցների առողջության ապահովագրության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲԷՑ-ԲԸԾՁԲ-15/05» ծածկագրով բաց ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման համաձայն, իսկ հրավերի փաթեթը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am կայքում զետեղված բաց ընթացակարգի օրինակելի ձևին համապատասխան:

22.04.2015թ. թեժ գիծ ներկայացրած «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ահազանգի հիման վրա տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի հերթական նիստը, որտեղ ուսումնասիրվել է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած բողոքը և հաշվի առնելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացրած պարզաբանումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 6 արձանագրության 1-ին կետով որոշել է Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին:

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացրած պարզաբանումն ուղղված է եղել հայտի տեխնիկական բնութագրի «Ընդհանուր բացառություններ» բաժնի 2.1 և 3.8 կետերը լիարժեք հասկանալի դարձնելուն, քանի որ տվյալ կետերում տեղ գտած

շարադրանքը հասկացվում է երկակի և այն որպես հայտի փոփոխություն դիտարկել չի կարելի: Հետևաբար, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած պարզաբանումը ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտում չէ:

Ներկայացված պարզաբանումից հետևում է.

ա) Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և ընդհանուր ապահովագրության գաղափարի՝ ապահովագրական ընկերության կողմից ենթակա են հատուցման այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում: Ապահովագրությունն իր ամբողջ գաղափարով և գործունեությամբ գործ ունի հավանականության և ռիսկի հետ, այսինքն՝ ապահովագրության պայմանագրի կնքումն արդեն տեղի ունեցած պատահարների հատուցման պարտավորությամբ համարվում է առոչինչ:

Պատվիրատուն նշել է, որ անհրաժեշտ է տարանջատել նախկինում առաջացած հիվանդությունների պահպանողական և/կամ մշտական բուժումը և վերջիններիս սրացումները, որոնք պահանջում են անմիջական բժշկական միջամտություններ և/կամ օգնություն:

Այսպիսով, հատուցման ենթակա են այն ծախսերը, որոնք առաջացել են հիվանդությունների և/կամ վիճակների սրացումների և բարդությունների ժամանակ՝ անկախ բուն հիվանդության և/կամ վիճակի առաջացման վաղեմությունից, ինչպես նաև ապահովագրական տարվա ընթացքում ի հայտ եկած նոր հիվանդությունների և/կամ վիճակների բուժման ժամանակ: Օրինակ՝ եթե ապահովագրված անձն ունի սրտաբանական քրոնիկական հիվանդություն և ստանում է համապատասխան պահպանողական բուժում, այն ապահովագրական ընկերության կողմից չի դիտվում որպես պատահար, իսկ եթե նույն հիվանդությունն անցնում է սրացման փուլի, որի արդյունքում նրան ցուցվում է որևէ միջամտություն, օրինակ՝ պսակաձև անոթների ստենտավորում, այդ դեպքում այն դիտվում է որպես ապահովագրական պատահար:

Ըստ Պատվիրատուի՝ թեև «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն չունի այս կետն իր բացառություններում, սակայն հատուցել այն հիվանդությունների պահպանողական բուժումը, որոնք առաջացել են մինչև ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ մտնելը՝ չի կարող:

բ) Նույն գաղափարը կիրառում է սրտաբանության ինվազիվ բուժման ընթացքի մի մաս կազմող սրտի ռիթմավար սարքերի ձեռք բերումը, դրանց տեղադրումը և հետագա վերահսկման ծախսերը: Այսինքն, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն նույնպես տրամադրում է այդ բոլոր ծախսերն անհրաժեշտության և/կամ հիվանդության սրացման դեպքում:

Հատուցման ենթակա չեն պլանային բնույթ կրող սրտի ռիթմավար սարքերի տեղադրման և վերատեղադրման բոլոր ծախսերը, քանի որ այն հանդիսանում է որպես պահպանողական բուժական միջոցառում և ուղղված է կյանքի որակի բարձրացմանը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր պահանջները բավարարված են «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից, հետևաբար երկու ընկերություններն առաջարկում են նույնատիպ ապահովագրություն, սակայն «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը 40000000 ՀՀ դրամով ավելի ցածր է «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկից:

Պատվիրատուն նշել է, որ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի 22.04.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ներկայացրած ահազանգը կատարվել է իրավասու մարմնի www.gnumner.am կայքում տեղադրված հայտարարության անգործության ժամկետի շրջանակներում, որտեղ անգործության ժամկետի ավարտը հստակ նշված է եղել՝ 22.04.2015թ. ներառյալ ժամը 00:00-ն, հետևաբար, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի բողոքը չի հակասել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով նախատեսված Գնումների գործընթացի բողոքարկման կարգի պահանջներին:

Պատվիրատուն հայտնել է, որ իրենց կողմից չեն խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ, 28-րդ, 31-րդ, 33-րդ և 48-րդ հոդվածների պահանջները:

Պատվիրատուի ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում 14.05.2015թ. ժամը 17:15-ին կազմակերպված հանձնաժողովի նիստին, ամբողջությամբ պնդել են «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ 14.05.2015թ. N 13-01/717 գրությամբ Կենտրոնին հայտնած իրենց դիրքորոշումը և հայտնել, որ քննարկելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից Կենտրոնի թեժ գծին ներկայացրած ահազանգում նշված առարկությունները՝ վերանայել են գնման ընթացակարգի արդյունքների գնահատման մասին որոշումը:

Հանձնաժողովի այն հարցին, թե արդյոք Պատվիրատուն սահմանված կարգով ծանուցել է Ընկերությանը՝ ուղարկելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, Պատվիրատուն պատասխանել է, որ չի ուղարկել՝ հաշվի առնելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից Կենտրոնի թեժ գծին արված ահազանգի առկայությունը:

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն Կենտրոնում 14.05.2015թ. ժամը 17:15-ին նշանակված հանձնաժողովի նիստին ներկայացրել է դիմում, որով խնդրել է «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննությանը որպես կողմ (շահագրգռվածություն ունեցող անձ) ներգրավել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին և վերոհիշյալ նիստի ընթացքում ամբողջությամբ պնդել է Ընկերության կողմից 27.04.2015թ. N 1918 գրությամբ Պատվիրատուին ներկայացված պարզաբանումը:

3. ԳԲԽ-14/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-14/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից աշխատակիցների առողջության ապահովագրության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԲԸԾՁԲ-15/05» ծածկագրով բաց ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են անձնակազմի (թվով 817 անձ) առողջության ապահովագրության թվով 22 ծառայություններ, որոնց համար նշվել է մատուցման ժամկետի սկիզբ՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, ավարտ՝ մեկ տարի:

Մասնավորապես, Ընթացակարգի հրավերին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել են անձնակազմի առողջության ապահովագրության հետևյալ ծառայությունները՝

1. **Շտապ բժշկական օգնություն:**
2. **Ամբուլատոր ծառայություններ՝**

2.1 բժիշկ-մասնագետների խորհրդատվություն և բուժում,

2.2 ամբուլատոր լաբորատոր-ախտորոշիչ բոլոր տեսակի հետազոտություններ,

2.3 ամբուլատոր գործիքային հետազոտությունների բոլոր տեսակներ,

2.4 ամբուլատոր վիրահատական մանիպուլացիաներ և կոնսերվատիվ բուժում,

2.5 ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումների դեպքում,

2.6 դեղորայքի, բժշկական պարագաների և վիրակապական նյութերի ծախսերի հատուցում:

3. **Ստացիոնար բժշկական օգնություն՝**

3.1 թերապևտիկ բուժում և ներհիվանդանոցային հետազոտություններ՝ գործիքային և լաբորատոր,

3.2 վիրաբուժություն,

3.3 ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների էական սրացումների դեպքում,

3.4 անոթային վիրաբուժություն,

3.5 ներհիվանդանոցային դեղորայքի, բժշկական պարագաների և վիրակապական նյութերի ծախսերի հատուցում:

4. **Սրտաբանություն՝**

4.1 կոնսերվատիվ սրտաբանություն,

4.2 ինվազիվ հետազոտություններ,

4.3 ինվազիվ բուժում,

4.4 վիրահատական բուժում:

5. **Էնդովասկուլյարնեյրովիրաբուժություն:**

6. **Ակնաբուժական ծառայություններ:**

7. **Հղիություն և ծննդօգնություն:**

8. **Ուռուցքաբանական ծառայություններ:**

9. **Տարեկան կանխարգելիչ բուժզննումներ:**

10. **Դժբախտ պատահարների ապահովագրություն:**

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն հայտով ներկայացրել է N 1 հավելվածին՝ տեխնիկական բնութագրին կից «Ընդհանուր բացառություններ» ցանկ, որի՝

• 2-րդ կետի 2.1 ենթակետով նշվել է, որ *ապահովագրողը չի վճարում* այն բժշկական ծառայությունների համար, որոնք կապված են հետևյալ հիվանդությունների և վիճակների կամ դրանց բարդությունների հետ՝ *մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերը և վիճակները:*

• 3-րդ կետի 3.8 ենթակետով նշվել է, որ *ապահովագրողը չի վճարում* հետևյալ ծառայությունների համար՝ *բժշկական սարքավորումներ (սրտի ռիթմավար սարքեր, ներառյալ վիրահատական ծախսերը, լսողական սարքեր, հաշմանդամային սայլակներ* և այլն):

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 04 արձանագրության 1.2 կետով որոշել է, որ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտի ոչ գնային առաջարկի՝ տեխնիկական բնութագրի «Ընդհանուր բացառություններ» ցանկի 2.1 և 3.8 կետերում *կան անհամապատասխանություններ*: Մասնավորապես՝

ա) 2.1 կետով նախատեսում է «Մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերը և վիճակները: Այս կետով կատարողը կարող է մերժել հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով» պահանջվող գրեթե բոլոր առողջության ապահովագրության տեսակները, քանի որ ապահովագրվողների մեծ մասի մոտ հիմնականում ապահովագրության ենթակա դեպքերը և վիճակները տեղի են ունեցել մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելը, իսկ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո հազվադեպ դեպքերում կարող են տեղի ունենալ ապահովագրության ենթակա դեպքեր և վիճակներ: Հետևաբար, նման բացառության պայմանով մասնակցի կողմից հրավերով ներկայացրած տեխնիկական բնութագրի պահանջները չեն կատարվելու:

բ) 3.8 կետով չի նախատեսվում սրտի ռիթմավար սարքերի տրամադրում, որը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի «Ինվազիվ բուժման» մասի կատարման պահանջին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 04 արձանագրության 1.4 կետի 2-րդ ենթակետով որոշել է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 04 արձանագրության 1.4 կետի 3-րդ ենթակետով որոշել է «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ 99265500 ՀՀ դրամ գնային առաջարկով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 05 արձանագրության 2-րդ մասով որոշում է կայացրել ընտրված մասնակից ճանաչել «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի՝ 99.265.500 ՀՀ դրամ գնային առաջարկով: Նույն արձանագրության 3-րդ մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և վերջինիս հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

8. «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ–ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում, որտեղ նշվել է նաև արդիականության ժամկետը՝ մինչև 22.04.2015թ. ժամը 00:00-ն ներառյալ:

9. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն 22.04.2015թ. ժամը 15:12-ին ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ Ընթացակարգով վերջինիս կողմից ներկայացված հայտը Պատվիրատուի կողմից, ըստ էության, մանրամասն չի քննարկվել, ինչի արդյունքում հայտը պատշաճ չի գնահատվել, ուստի վերը նշված ահազանգով խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2015թ. կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի 27.04.2015թ. N 1918 գրությամբ ներկայացված պարզաբանումը, 27.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 06 արձանագրության 1-ին կետով որոշել է ընդունել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից թեժ գծին ներկայացրած ահազանգում նշված առարկությունները և դրա հիման վրա վերանայել գնման ընթացակարգի արդյունքների գնահատման մասին որոշումը՝ դադարեցնելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական

ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը և գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին:

4. ԳԲԽ-14/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի 08.05.2015թ. ներկայացրած բողոքը և 22.05.2015թ. Ն/SU-06/1-2371 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 14.05.2015թ. N 13-01/717 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 27.04.2015թ. N 1918 գրությամբ Պատվիրատուին տրամադրած պարզաբանումը, «ԲԷՑ-ԲԸԾՁԲ-15/05» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի և «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած հայտերը և Կենտրոնի թեժ գծին 22.04.2015թ. ստացված ահազանգը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով սահմանվում են «գնման առարկա» և «գնման առարկայի բնութագիր» հասկացությունները, մասնավորապես այդ կետերի համաձայն՝ գնման առարկան հանդիսանում է գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը կազմում է գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-

ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրված մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը խորհրդին ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն Օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 136-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են իր իրավունքները, կամ կրել է, կամ կարող է կրել վնասներ, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին:

Ընթացակարգի հրավերին կից հավելված N 6՝ պայմանագրի նախագծի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, ուսումնասիրությունից երևում է, որ դրանով սահմանվել են 817 անձի համար առողջության ապահովագրության թվով 22 ծառայություններ, և դրանց վերաբերյալ Պատվիրատուի կողմից որևէ բացառություն կամ սահմանափակում չի նախատեսվել:

Մինչդեռ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածին՝ տեխնիկական բնութագրին կից ներկայացրել է

նաև «Ընդհանուր բացառություններ» անվանմամբ ցանկ, որի համաձայն ապահովագրողը չի վճարում բժշկական մի շարք ծառայությունների համար: Մասնավորապես, ցանկի 2.1 կետի համաձայն՝ ապահովագրողը չի վճարում մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերի և վիճակների դեպքում մատուցվող բժշկական ծառայությունների համար:

Բացի այդ, նույն ցանկի 3.8 կետի համաձայն՝ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ը չի վճարելու նաև հետևյալ ծառայությունների համար՝ բժշկական սարքավորումներ (սրտի ռիթմավար սարքեր, ներառյալ վիրահատական ծախսերը, լսողական սարքեր, հաշման-դամային սայլակներ և այլն):

Այսպիսով, գտնում ենք, որ քանի որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով անձնակազմի առողջության ապահովագրմանը ուղղված ծառայությունների համար որևէ սահմանափակում չի նախատեսել, ուստի «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի տեխնիկական բնութագրին կից «Ընդհանուր բացառությունների» ցանկը (մասնավորապես, ցանկի 2.1 և 3.8 կետերը) ուղղակիորեն հակասում է Ընթացակարգի հրավերին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված պահանջներին:

Ուստի Պատվիրատուն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 06 արձանագրության 1-ին կետով որոշելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին ճանաչել գնման ընթացակարգի ընտրված մասնակից, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ուշագրավ է, որ Պատվիրատուն նույնպես արձանագրել է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտի ոչ գնային առաջարկում՝ տեխնիկական բնութագրի «Ընդհանուր բացառություններ» ցանկի 2.1 և 3.8 կետերում, առկա անհամապատասխանությունները, որի հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 04 արձանագրության 1.4 կետի 2-րդ ենթակետով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել: Պատվիրատուն իրավացիորեն նշել է, որ Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 2.1 կետով նախատեսված «Մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելն առաջացած դեպքերը և վիճակները» բացառությունը կարող է հիմք հանդիսանալ Ընթացակարգի հրավերի

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով» պահանջվող գրեթե բոլոր առողջության ապահովագրության տեսակները մերժելու համար, քանի որ ապահովագրվողների մեծ մասի մոտ հիմնականում ապահովագրության ենթակա դեպքերը և վիճակները տեղի են ունեցել մինչև ապահովագրական ծածկույթի ուժի մեջ մտնելը, իսկ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո հազվադեպ դեպքերում կարող են տեղի ունենալ ապահովագրության ենթակա դեպքեր և վիճակներ:

Ինչ վերաբերում է 3.8 կետով նախատեսվում սրտի ռիթմավար սարքերի տրամադրումից հրաժարվելուն, ապա այն հակասում է հրավերի տեխնիկական բնութագրի «Սրտաբանություն» մասի ծառայությունների կատարման պահանջներին:

Սակայն պատվիրատուն, հիմք ընդունելով 27.04.2015թ. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը, 27.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 06 արձանագրությամբ վերացրել է «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը և Ընկերությանը ճանաչել գնման ընթացակարգի ընտրված մասնակից, մինչդեռ վկայակոչված պարզաբանմամբ չի վերացվել Պատվիրատուի կողմից նախկինում դիտարկված անհամապատասխանությունները, այլ ավելին, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից տրված պարզաբանմամբ ընդունվել է, որ սահմանափակված է ապահովագրական ծառայությունների ամբողջական և լիարժեք տրամադրումը:

Հետևաբար, գտնում ենք, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Պատվիրատուի կողմից կոպտորեն խախտվել է Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը, ապա հայտնում ենք, որ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն իր կողմից ներկայացրած հայտը (տեխնիկական բնութագիրը) չի փոփոխել, այլ 22.04.2015թ. ժամը 15:12-ին (անգործության ժամկետի ավարտից հետո) «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին կատարած ահազանգի կապակցությամբ Պատվիրատուին ներկայացվել է պարզաբանում:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Կարգի 136-րդ կետով նախատեսված գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին կատարված ահազանգը Գնումների

բողոքարկման խորհրդին ներկայացվող բողոք չի կարող դիտվել, ուստի ահազանգի վրա չեն կարող տարածվել բողոքի ներկայացման ժամկետներին վերաբերող պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի 08.05.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից աշխատակիցների առողջության ապահովագրության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԲԸԾՁԲ-15/05» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած նիստի N 06 արձանագրության 1-ին կետով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ին Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-14/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան